ՍԽՀՄ ՀՀՓԿ

ՀՐԱՀԱՆԳ

ԿԱՅԱՐԱՆԻ ՀԵՐՔԱՊԱՀԻՆ ՅԵՎ ԳԹԵՐԻ ՀԵՐՔԱՊԱՀԻՆ—ԳՆԱՅՔՆԵՐԻ ԿՏՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՑԵՐԿԱԹԳԹԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ 1935

656.2
Z-94

6.96.2
14.06.2013
2-94

Թարգմանիչ՝ ՑԵԳԻԱԶԱՐՅԱՆ
Խմբագիր՝ ՍԱՐԳՍՅԱՆ
Թողարկիչ՝ ՄԻՐԿՈՎԻՉ

36-Ա
Ց1001
24 SEP 2010
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՄԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

14-ն նոյեմբերի 1935 թ. № 209/у

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԿՏՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գնացքների կտրումները, վորոնք մեծ վնասներ են պատճառում տրանսպորտին և յետացնում են գնացքների յերթևեկությունը, յերկրորդ կվարտալում աննշան կրճատումից հետո, առաջին կվարտալի հետ համեմատած, վերջին ամիսներում նորից սկսել են ավելանալ, հասնելով ցանցում ամսական մինչև 2000 կտրումների, միայն I. խմբի ավարիաներով։ Մի շարք յերկաթուղիներում (Մոսկվա—Կուրսկի, Յեկատերինինսկայա և այլն) կտրածները կազմում են

ՍՍՌՄ 932 ։ 5 24.446

մոտավորապես I խմբի խորտակումների և ավարիաների կեսը։

Երկաթուղային տրանսպորտի մի քանի հրամանատարների փորձերը՝ բացատրել գնացքների կտրումների աճը հենվելով օբյեկտիվ-տեխնիկական պատճառների վրա— գծի պրոֆիլի ծանրաքաշ և յերկար կազմերի և այլն հերքվում են այնպիսի անվիճելի փաստերով, վոր կտրումների մոտավորապես 60 տոկոսը կատարվում է տափարակներում, այսինքն տեղից շարժելիս և գնացքի կացուրդի ժամանակ, ինչպես նաև նրանով, վոր կտրումների մեծ քանակը կատարվում է թեթև կազմերում (մինչև 1000 տ.) և վոչ լրիվ կազմով գնացքներում։ Կատարված կտրումների քննությունը և վերլուծությունը ցույց տվին, վոր նրանց՝ հիմնական պատճառները հանդիսանում են.

1. Գնացքը տեղից վոչ սահուն վերցնելը, յերբ մեքենավարները գնացքը յետ հրելով, չեն սպասում յետևի վագոնների լրիվ կացուրդին, առաջ են շարժվում և կտրում գնացքները։

2. Խիստ արգելակելը, վորի ժամանակ յետևի վագոնները վրա յեն վազում առաջինների վրա և հետո ույժով յետ են դառնում և կտրվում են։ Գնացքների անհամաձայնեցրած արգելակումն մեքենավարի և կոնդուկտորական բրիգադի միջև։

3. Գնացքների անկանոն տանելը կայարանքներում (перегон), մանավանդ վերելքում և բեկման տեղում։

4. Կազմերի անկանոն և անփույթ կցումն-պատուտակումն, յերբ բուֆերային վահանակների միջև մնում են մեծ արանքներ։

5. Վագոնայինների կողմից լծասարքի պարագաների անփույթ գննությունը (և փորձարկումը)։

Այսպիսով կտրումների հիմնական պատճառը հանդիսանում է մեքենավարների, կոնդուկտորների, կցիչների, կազմիչների, վագոնների գնիչների և ավտոմատչիկների, կայարանների և գծերի հերթապահների կողմից իրենց ելեմենտար պարտականությունների չկատարելը, վատ հրահանգելը և նրանց աշխատանքներին թույլ հսկողությունը՝ երկաթուղային տրանսպորտի հրամանատարների կողմից։

Ստուգումը ցույց տվեց, վոր խմ № 83/y հրամանը և № 204 կարգադրությունը, վո-

ՀԱՍՍՌ ԳՊ-ի գրադարան
ГСС Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ա. Մասիսյան
56295-66

րոնք պահանջում են մեքենավարների և յերկաթուղային տրանսպորտի ուրիշ աշխատողների ինստրուկցիայի ուժեղացնելը, յերկաթուղիների մեծամասնության մեջ անբավարար են անցկացվում, մինչև հիմա մեքենավարները նույնիսկ մատակարարված չեն գծի ստուգված պրոֆիլներով։

Մեքենավարները, կոնդուկտորները, կըցիչները, կազմիչները, վագոնների զննիչները, կայարանների և գծերի հերթապահները՝ թույլ գիտեն իրենց պաշտոնական պարտականությունները գնացքների կըտրումների դեմ պայքարելու վերաբերյալ։

Հրամայում եմ.

1. Յերկաթուղիների պետերին և յերկաթուղիների քաղ-բաժինների պետերին. ձեռք առնել բոլոր միջոցները կտրումները վերացնելու համար։ Ընդունել անշեղորեն ղեկավարման համար իմ կողմից հաստատված հրահանգը գնացքների կտրումների դեմ պայքարելու վերաբերյալ (տես հավելված)։

2. Յերկաթուղային տրանսպորտի հրամանատարներին տալ հրահանգներ ստորագրությամբ յուրաքանչյուր աշխատողին, հրանգել նրան, սիստեմատիկորեն ստուգել հրահանգների յուրացնելը և կատարելն աշխատանքի տեղում։

3. Մեքենավարներին, կոնդուկտորներին, կազմիչներին, կցիչներին, վագոնների զննիչներին, ավտոմատչիկներին, գծերի և կայարանների հերթապահներին ճշտորեն կիրառել հրապարակվող հրահանգները։

Հաղորդակցության Ճանապարհների
Ժողովրդական կոմիսար
Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ.
Հաղորդագրության Ճանապարհների ժողովրդական կոմիսար՝
Լ. Կագանովիչ
14-ն հոկտեմբերի 1935 թ.

ՀՐԱՀԱՆԳ
ԿԱՅԱՐԱՆԻ ՀԵՐԹԱՊԱՀԻՆ ՅԵՎ ԳԾԵՐԻ ՀԵՐԹԱՊԱՀԻՆ—ԳՆԱՑՔՆԵՐԻ ԿՏՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I

Գնացքների կտրումները կայարանի հերթապահի և գծերի հերթապահի մեղավորությամբ առաջ են գալիս նրանից, որ նրանք չեն հետևում, կազմիչների, կցիչների և կոնդուկտորների կողմից տեխնիկական շահագործման կանոնների կատարմանը, գնացքների կազմելու և մանևրներ կատարելու նկատմամբ և չեն հրահանգում նրանց։

Մասնավորապես կայարանի հերթապահը և գծերի հերթապահը չեն հետևում, որ-պեսզի.

1. Բոլոր վագոնները գնացքներում ճիշտ պտուտակած լինեն։

2. Գնացքներում չդրվեն վագոններ տեխնիկական անսարքություններով, որոնք սպառնան յերթևեկության անվտանգությանը։

3. Գնացքներում չդրվեն պլատֆորմաներ, յերկուսից ավել ընդհանուր բեռնատակ միացրած, բայց որոնք հատուկ հարմարանքներ չունեն այդպիսի փոխադրության համար։

4. Գնացքներում 2 սռնանի դատարկ վագոններ և թեթև բեռնվող 5 տոննից պակաս բեռնվամբ վագոններ չտեղավորվեն բեռնվածների մեջ։

5. Գնացքում ռեսուրների անհավասար նստվածքով վագոններ չդրվեն։

6. Այն մասի մոտ, որտեղ գնացքը սպասարկվում է ձեռքի արգելակներով, նրանց տեղավորելը հավասարաչափ լինի։

7. Ձեռքի արգելակմամբ ընթացող գնացքի մասում խառը կերպով չդրվեն մեծաբեռնման և 2 սռնանի վագոններ։

8. Մինչև մանևրներն սկսելը ավտո-

արգելակային վագոնները պարպած լինեն և արգելակները արձակված։

9. Ավտոարգելակային գնացքներում բոլոր միացման բազուկները միացրած լինեն։

10. Գնացքի ավտոարգելակային մասի վերջում դրված լինի ավտոարգելակային վագոն և վոչ թե վագոն, վորն ունի միայն միջանցիկ փող։

11. Ավտոկցման վագոնները, նրանց գնացքներում դնելու դեպքում, միացրած լինեն պտուտակային մոտքաշներով, վագոնների հետ միայն անցման հարմարանքի ոգնությամբ։

12. Կազմի քաշը և յերկարությունը սահմանված նորմայից չանցնեն։

13. Մուտքի ազդանշանը ժամանակին բացված լինի կայարանում և գնացքները չյետացվեն մուտքի ազդանշանի մոտ, դրանով չապահովելով նրանց ընդունելը կայարանում։

II

Գնացքների կորուստները նախազգուշացնելու համար կայարանի հերթապահը և գծերի հերթապահը պարտավոր են ճշտությամբ կատարելու հետևյալ կանոնները.

1. Ղեկավարել մանևրային աշխատանքներին և հետևել, վորպեսզի մանևրաներին պատրաստվելը և մանևրները կատարել ճշտությամբ, համաձայն տեխնիկական շահագործման կանոնների։

2. Ղեկավարել գնացքների կազմելուն և հետևել, վորպեսզի վագոնների տեղավորելը գնացքում, նրանց կցելը, արգելակավոր վագոնների բաշխելը և միացման բազուկների միացնելը, ավտոարգելակային մասում կատարվեն ճշտությամբ, համաձայն տեխնիկական շահագործման կանոնների։

Հետևել, վորպեսզի ձևակերպված կազմերը յերկարությամբ և քաշով սահմանված նորման չանցնեն։

3. Կայարանի հերթապահին սիստեմատիկորեն ստուգել մանևրային աշխատանքների կատարումը կայարանում, իսկ գծերի հերթապահին առանց բացակայության գտնվել իրեն հանձնված շրջանում։

4. Սիստեմատիկորեն հրահանգել ստորադրյալ աշխատավորներին և պահանջել

նրանց կողմից պաշտոնական հրահանգների ճշտորեն կատարումը։

5. Ժամանակին կանչել վագոնների ղեկավարներին և յուղիչներին պատրաստ կազմերը գնելու համար, անսարք վագոնների վերանորոգման և գնացքի ավտոարգելակային մասի ու կոնդուկտորական բրիգադի փորձարկման համար գնացքը ժամանակին ընդունելու համար։

6. Հսկել այդ աշխատավորների ժամանակին ներկայանալուն գնացքներին և նրանց կողմից վագոնների տեխնիկական զննություն կատարելուն և ավտոարգելակների փորձարկմանը։

7. Գծերի հերթապահներին կայարաններում, վորտեղ նրանք կան, իսկ մնացածներում՝ կայարանների հերթապահներին, զննել բոլոր կայարանից ուղարկվող գնացքները, ինչպես իրեն կազմած, նույնպես առանց փոփոխման անցնող նրանց ճիշտ կազմելու, կցելու արգելակավոր վագոնների բաշխման և արգելակորդների տեղավորման նկատմամբ։

8. Անմիջապես վերացնել ամեն տեսակ անսարքություններ հայտնաբերված իր կազմման, կամ տրանզիտային գնացքում։

Հետևել, վորպեսզի գնացքի շոգեքարշը, վորտեղ վերահսկող ավտոարգելակային կետեր չկան, մաքուրվի կազմի համար ժամանակին և կատարի ավտոարգելակների սահմանված փորձարկումը։

9. Դիծ տալով գնացքին, ապահովել նրա ընդունելը կայարանում առանց յետացումների մուտքի ազդանշանի մոտ։ Ժամանակին և ճշտությամբ մատուցել մականը (жезл) շոգեքարշին։

10. Ստորագրված գործակալների կողմից մանեվրաներ կատարելու և գնացքներ կազմելու կանոնների խախտման համար, նրանց վրա դնել վարչական տույժեր, համաձայն կարգապահության մասին կանոնադրության։

III

Կայարանի հերթապահի և գծերի հերթապահի վրա դրվում է լրիվ պատասխանատվություն, վարչական և դատական կարգով ներկա հրահանգի ճշտորեն կատարման համար։

Շահագործման Կենտրոնական
կառավարչության պետ՝ ԱՐՆՈԼԴՈՎ

ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

Տպ. «Զարյա Վոստոկա» Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ.

Պատվեր 2496 Գլավլիտ Б—1337 Քանակ 200

ՀՀ Ազգային գրադարան
NL0296061

24.446
5-877
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ИНСТРУКЦИЯ

дежурному по станции и дежурному по путям по борьбе с разрывами поездов.